

Թիւնը

Տարեկան գինը 10 րուբլ կէս տարվանը 6 րուբլ:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Օտարաբաղադրացիք գիտնում են ուղղակի
Тифлиса. Редакция „Мусава“

ՄԱՆԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերէն)

Հայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Հայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԱԳՈՒԹԻՒՆ

Քաղաքական վերջին անցքերը:—Ներքին տեսութիւն: Նամակ Ալեքսանդրապոլից: Նամակ Խմբագրին: Ներքին լուրեր:—Արտաքին տեսութիւն: Փրանսիա: Վանի և շրջակայից մէջ պատահած հարստահարութիւնները: Նամակ Փիւրբիայից: Արտաքին լուրեր:—ԱՄՆայի հետադիւրսներ:—Ճայտարարութիւններ:—Տեղեկացոյց:—Բանասիրական: Քատրօն Նոր-Նախիջևանում:

ՔԱՂԱՔԱՍԱՆ ՎԵՐՋԻՆ ԱՆՑՖԵՐԸ

Ապրիլի 24-ին անգլիական արտաքին գործերի մինիստր մարկիզ Սալիսբուրիի ներկայացրեց պարլամենտին մի տեսութիւն արեւելեան գործերի դրութեան մասին: Ինչպէս երևում է լրագիրների մէջ տպված հաշիւներից մինիստրը աշխատել է մեկնել պարլամենտին, թէ մինչև որ աստիճան իրագործ-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԹԱՏՐՈՆ ԵՐԸՆԱՍԻՐԱԿԱՆ

Le théâtre instruit mieux que
ne fait un gros livre.—

Voltaire

Թատերական ընկերութեան հարցը մեզանում վերջին ժամանակ գտաւ մի արձագանք շատերի արտի մէջ, մոտ Ծանր քաղաքական խնդիրների կարգը, և դարձաւ մի ordre du jour թէ թատերականների, թէ մի քանի երիտասարդական եռանդով վառված առաջադր քաղաքացիների համար, որոնք անխնայ յարատւութեամբ աշխատում են իրագործել այդ ցանկալի և արդիւնաւոր առաջադրութիւնը: Ընդհանրապէս թատրոնի ներգործող ազդեցութիւնը մնաւոր և բարոյական վարդապետ մէջ և նորա մեծաշահ օգուտները քաղաքացիութեան մէջ, ամենին ակնհայտ է: Բայց մանաւանդ թէ, հայկական թատրոնը կարող է դառնալ մի ասպարէզ ուսկից շատ հեշտ կը լինի ժողովուրդի ուշը դարձնել մեր մաքուր գրականական լեզուի վրա, գրական նորա սիրտը դէպի իր մայրենի լեզուն ու այդպէս արժարժել ընթերցան սիրութիւնը մեծադոյն ամբողջ մէջ: Նաեւ այժմ հայկական թատրոնը մեզ համար մի բարեպաշտ հիւրին միջոցներից միսն է վերականգնելու, մշակել տեղական հայի լեզուն, ներկայացնելով բնի վրա—հետաքրքրաշարժ և իմաստալից, ճարտար և մաքուր մայրենի լեզուով գրված թատերականներ: Ուրեմն, բաղդի բերմամբ այդ ցանկութիւնը մեզանում կարելի է ասել որ շուտով իրա-

վել է Բերլինի դաշնագիրը: Մարկիզ Սալիսբուրի իր տեսութիւնից համառոտ է հետեւեալ եզրակացութիւններին:

Բազարայի վերաբերութեամբ Բերլինի դաշնագրի յօդուածները զրեթէ բոլորովին իրագործված են: Այդ իշխանութեան սահմանադրութիւնը հաստատված է բազարացի պատգամաւորներից, իշխանը ընտրված է, սահմանների որոշելը նոյնպէս աշոյակ է գնում և շուտով գեղեցիկ վախճան կունենայ:

Արեւելեան Բուսնիայի գործերը, մինիստրի կարծիքով, թէպէտ դանդաղ են ընթանում, բայց նրանք էլ լաւ վախճան կունենան. այդ երկրի օրգանական սահմանադրութիւնը պատրաստ է, միայն

գործվում է: Նւ ահա արդէն մեր քաղաքում կազմվում է հաստատ կանոնների վրա հիմնված՝ դրամատիկական արուեստ սիրողների մի ընկերութիւն: Այդ ընկերութեան կանոնադրութիւնը ներկայ ամսին 20-ին, թատերասէրները մատուցին մի խնդիրով պ. քաղաքապետին, որ նա ըստ սահմանեալ կարգի ներկայացնէ տեղութեան հաստատումն առաջարկ:

Այն թատերական ընկերութեան նպատակն է տարածել դրամատիկական արուեստի գիտութիւնը, զարթոյնել հասարակութեան մէջ սեր և ձգտումն դէպի թատերական հանդէսները և ընտելացնել նրան բեմական տեսարանները իրեն մի կենսական անհրաժեշտ կարեւորութեան. այլ նաեւ նպատաւոր լինել տեղական զանազան ընկերութիւններին և ազգօգուտ ձեռնարկութիւններին դրամական միջոցներով բեմական ներկայացումները և նուազահանդէսներից ձեռք բերված գումարից: Բայց այնքան ընկերութիւնը առաջադրում է կառուցանել ապագայում իր քաղաքում, թատրոնի շէնք մը արժողութեամբ առ նուազ 10 հազար րուբլ, և այդ առարկայի համար կազմում է մի առանձին գումար անուանեալ թատրոնական: Ընկերութիւնը միանգամայն կունենայ իւր գոյութիւնը և գործունէութիւնն ապահովանելու համար հիմնական դրամագումար մը որը բաղկանում է անդամների (կին և տղամարդ) տարեկան 6 րուբլ վճարներից: Իսկ թատրոնի շինութեան համար գործարարութեամբ առաջ բերվում է ամենայն գործառնութեանից հաւաքած գումար գումարից դուրս հանված ոչ պակաս 25% շուրջ նոյնպէս կամուր դրամական տուրքը յարկաւորվում է այդ գումարին: Նւ երբ այդ թատրոնական գումարը մի օր հասնի և անցնի նշանակալ 10 հազարից, յայնժամ ընկերութիւնը թէ որ չը զգայ անհրաժեշտ կարել թատրոնի շինութեան, կարող է այլ ևս սպասել—չարունակելով իր գործունէութիւնը նախա-

պետք է որ սուլթանը նրան ստորագրէ, զիսաւոր նահանգապետը արդէն նշանակված է, ուսաց զօրքերն էլ արդէն հեռանում են այդ երկրից:

Արտի վերաբերութեամբ տեսութեան մէջ ասված է, որ թէպէտ այդ երկրում թիւրք կառավարիչների ձեռքով գործադրվել է ամենաազատ սահմանադրութիւն, բայց դրա հետեւանքը այն է եղել որ այդ կղզու վրա նոր ապստամբութիւն է ծագել:

Բ. Դրան կողմից ուղարկված է Փոքր-Ասիա մի մասնագործի որ պետք է ծանօթանայ երկրի կարիքների հետ, տեղեկութիւն տայ Բ. Դրան և բարենորոգումների մի նախագիծ ներկայացնէ, բայց մարկիզ Սալիսբուրի կարծիք

սահմանեալ շրջանից չի շեղուած—և հասուցանել այդ գումարը մինչև 25 կամ 40 հազար րուբլի, ու ապա խնդրել տեղական քաղաքային վարչութիւնից մի յարմար կարելոր տեղ այդպիսի շինութեան համար:

Ընդհանուր ժողովն այդ ընկերութեան ընտրում է իր միջից ութն անձինք, որոնք ներկայացնում են ի միասին մի թատերական վարչութիւն: Այն վարչութեան յանձնվում է անտեսել, հոգ տանել և լեյնել զանազան պիտոյքն իւր գործառնութեան համար: Նոր հսկողութեան տակ կազմվում է մի կատարող թատերախումբ՝ ընդունակ, ձիւրք և բնատուր քանքար ունեցող երիտասարդներից և օրիորդներից, թէ անդամների և թէ օտար անձինքների մասնակցութեամբ: Թատերական վարչութիւնն անշուշտ կաշխատէ ու նենայ իւր սեփական մատենադարանը՝ լեյնել ընկի հայերէն և օտար լեզուներից թարգմանած թատերախաղեր՝ ուր ներկայացուցած լինի սուր, կծու և երգիծական գրքով հայկական վաղ ու բարձր և բնական պատկերներ դուրս առած նորա բուն ընդանկան կենցիցից,—և լեյնելու ըստ բաւականին կարելոր պիտոյքներով վերաբերեալ բեմական առուեստի հմուտութեան: Իսկ կատարող թատերախումբը կունենայ նոյնպէս իւր նիւստերը ուր հաւաքվելու են ի միասին երիտասարդներ և օրիորդներ, դասախօսութիւններ լսելու, թատերական, բանաստեղծական գրուածներ կարդալու, պատրաստուելու և քաջ ուսանելու բեմական գեղեցիկ արուեստը և նորա հմուտութիւնը: Բայց այդմանէ, նա կունենայ այլ մի արտօնութիւն՝ ձրիաբար ներկայանալ ամենայն հանդէսների ընկերութեան. ի հարկէ, թէ որ—չէ մասնակցում այն թատերախաղութեան մէջ:

Եթէ ընկերութեան նիւթական միջոցները ներեն, կարող է նա իւր կարգադրութեան հիման վրա պահել սեփական ծախքով մի այլ մշտական խումբ հայ բարեկրթեալ դերասանների և դերասանուհիների:

է յայտնում, որ այդ մասնագործի աշխատանքները ոչինչ դրական հետեւանք չեն ունենայ, քանի որ թիւրքիայի Փինանները շատ վատ դրութեան մէջ են:

Այդ տեսութեանից երևում է, որ Ռուսաստանը կատարել է այն բոլոր պարտաւորութիւնները, որ նրա վրա դրել է Բերլինի դաշնագիրը, Բ. Դրանը մինչև այժմ չէ իրագործել Բերլինի կոնգրէսի այն վճիռները, որոնք վերաբերում են թիւրքիայի եւրոպական նահանգների վերանորոգութիւններին, յոյն-թիւրքաց սահմանի ուղղելուն և Փոքր-Ասիայի մէջ մրտցնել բարենորոգումներին....

Ազգիպտոսի հարցը, որ իր ժամանակ այդքան աղմուկ հանեց, այժմ աշխատում են մոռացու-

Առ այժմ, այդ նորածին թատերական ընկերութիւնը տակաւին առանց մի անդամակցութեան կապի, կազմված մի ամբողջ քանի մը միակողմանի անձինքներից, ունի ներկայացման հանդէսներից հետզհետէ ձեռք բերված պարտաւոր մի գումար մօտ 800 րուբլ, ըստ որում կարելի է ասել որ հայկական թատրոնի հիմն արդէն դրված է: Սակայն և այնպէս, քաղաքային կլուրի անդամներն ալ արտայայտում են լիովին համակրութիւն դէպի թատերական ընկերութիւնը. ապացոյցն կարող է լինել այն որ նոյն խումբում են իրանց համար կառուցանելու Պատուարենի դահլիճում մի վայելուչ, շքեղազարդ, և ամենայն կարեւոր յարմարութեամբ յատկապէս թատերասէրների համար—բեմ, որ և թողնել այդ ընկերութեան կառավարութեան տակ: Բայց, շինելու թատերական դահլիճում, ինչպէս որ երբեք չէ յատկազօգից, շատ դժուարին պիտի լինի, բեմական հանդէսները ընդհանրապէս այդ ընկերութեամբ մեծամասնութեան համար մոտ բերելով ժամանակեան տեղական կենսից պայմանները: Թէպէտ և տարակոյս չը կայ որ այդ թատերաբեմի շինութիւնը բարենպաստէ առ իր թէ և կարող է շատ նպաստամտոյց լինել ընկերութեան ինչպէս իւր գործառնութեան և յառաջադիմութեան, նոյնպէս իւր նախասահմանեալ նպատակին շուտով հասնելու համար:

Սակայն թատերասէրները լի ակնկալութեամբ և անհամբերութեամբ սպասում են հաստատման իրանց կանոնադրութեան, որ այդով սպասազօգնած կարողանան միաւորվել հասարակի հետ անդամակցութեան անկողնի կապով, վատասելի նորա հաւաքը և վստահութիւնը ու պիտի հաստատ, ամուր հիման վրա իրանց արդիւնաւոր գործը որ սպաւազույթ խոստանում է տալ այնքան մեծաշահ օգուտներ:

23 ապրիլի 1879

Պ. Սալթիքեան

Թեան տալ: Լնդլիան ըստ երեւոյթի այլ ևս չէ խառնուում Լնդլիանի գործերում և չէ պահանջում, որ խեղդիկն գահնկեցանեն: Լնդլիական միւնիստրութիւնը աշխատում է, որ այդ գործը մոռացվի:

Լրագիրները այն կարծիք են յայտնում, որ եթէ Լնդլիան հետեւէ իր բռնած ընթացքին Լնդլիանի վերաբերութեամբ, նա ստիպված կը լինէր հաշիւներ տեսնել Ֆրանսիայի հետ: Կամ այդ երկու պետութիւնները պէտք է բաւականացնէին իրանց օդուտները և ձեռք ձեռքի տուած գործէին, կամ պէտք է միմեանց պատահէին իբրեւ թշնամիներ: Թէ առաջին և թէ երկրորդ դէպքերը անգլիական կառավարութիւնը ներկայ ըստ էի համար անյարմար դատեց: Լնդլիանի հարցը այն հարցերի թւին է պատկանում, որոնց չէ կարելի խաղաղութեամբ վճռել: Եւ այժմ Լնդլիայի և Ֆրանսիայի թշնամութիւնը բարեկամութեան քողով է ծածկված: Հէնց որ այդ թշնամութիւնը կը մերկանայ, արեւելքում էլ գործերը ուրիշ ընթացք կը ստանան:

Վ. Տ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱՆԷՔՍԱՆԻՐԱՊՈԼԻՑ

26 ապրիլի

Հեղափոխութեան մեծամեծ փոփոխութեամբ աւելանում են տեղի ունեցող միջոցները, մանաւանդ գործնի ու գարու գները. ըստ որում մեր գաւառի արտերը լինելով դիւրաւորապէս անջատի մեծ են միայն անձրեկի յոյսով: Հասնել վերջացել է մէկ ամսից աւելի կայ, բայց արտերը անձրեկ երես չեն տեսել, սերմերն ինչպէս ցանվել են այնպէս առանց ծելլու մնացած են: Դողմունքը այդ պատճառով մեծ տագնապի մէջ է, քանի որ մեծ թանգութիւն է սպասվում, մանաւանդ եթէ եղանակը մի ամիս այսպէս շարունակվի, սով անգամ կարելի է սպասել: Լնդլիան երեք տարիներում հարիւր հազարաւոր աւելորդ մարդիկներով ծանրաբեռնված էր մեր Երկրի, բայց ոչ ոք տրտունջ չէր յայտնում թանգութեան համար, որովհետեւ մթերքներից կարող էիր ձարել որքան ցանկայիր, իսկ այժմ ընդհանրապէս: Եթէ հետեւեալ ամսում գէթ հինգ անգամ անձրեկ գայ, կարող է կրկին արժանութիւնը վերականգնել: Եւ այդ նպատակով գաւառեցիք սուրբ Լստուածածնի եօթ վերաց պատկերը հրաւիրեցին իրանց գիւղերը շրջելու և զոհեր մատուցին: Բաղաբացիք ևս անտարբեր չը գտնվեցին այդ ջերմեռանդութեան մէջ և ամիս 29-ին նրանք ևս մատուց պիտի մորթեն: Եւստի տեղիս պատգամաւորութիւնը մի անգիր է պատրաստել ներկայացնելու երկսեռ դպրոցների հոգաբարձութեանց բարեշնորհ նախագահին, որով խնդրում է կազմել խառն ժողով ծանօթացնելով դպրոցների նիւթական և ուսումնական գրութեան հետ, մանաւանդ կամեւում է մի քանի կարեւոր հարցեր առաջարկելու պատուելի հոգաբարձութեանն իրագործելու համար: Եւստի հարցերի թւում է և դպրոցները

րին տեսուչ հրաւիրելու հարցը, որ արդարեւ ամենակարեւոր է մեր դպրոցների նկատմամբ, վաճառքի այժմէն պիտի աշխատի հոգաբարձութիւնը մի գործունեայ տեսուչ ձեռք բերելու, որ ուսումնական տարվայ սկզբին առանց յետաձգութեան և ժամաւաճառութեան դպրոցներում ուսումնի շարունակվի: Եւստի մեր կողմից ի նկատի ունենալ երկու նշանաւոր անձնաւորութիւններ այդ բարձր պաշտօնին յարմար, մեծ. Լ. Բիստրոմ Զովհաննիսեանց և մեծ. բժիշկ Գաբրիէլ Զովհաննիսեանց, և խորհուրդ կը տայինք պատուելի հոգաբարձութեանը շուտով սկսել նոցանից մէկի համաձայնութիւնն ստանալու մասին թղթագրութիւններ: Հաստատ աղբիւրից մեզ հաստատացնում են, որ դպրոցներն ունեն միջոց մատուցողութեան մի տեսչի համար վճարել 1500 ռուբլի, քանի որ նրանց համար աւելացած մի բաւականաչափ մուտք նորաշէն կրպակների վարձերի կրկնապատկութեամբ: Իսկ եթէ չը բաւի դպրոցների միջոցը, թող հոգաբարձութիւնն ու պատգամաւորութիւնն ուշադրութիւն դարձնէ ըստ իրանց պարտականութեանց Լ. Բ. եկեղեցու մոմաւաճառութեան արդիւնքը դարձնել դպրոցներին, քանի որ Եւստի Լ. Բ. հաւանութեան հաստատած դպրոցի կանոնադրութեան զօրութեամբ պատկանում է դպրոցներին: Հրաժարեալ ուսուցիչները և մի քանի իրանց նման ուրիշներ դիտաւորութիւն ունեն բանալ մի մասնաւոր առանձին ուսումնարան որ և կարեւորութիւն կայ շատ: Եւստի կատարեալ համակրում ենք այդ օգտակար դիտաւորութեանը և խորհուրդ ենք տալիս, եթէ կարելի է բանալ այն թաղերում, որոնք քաղաքի ծայրերում լինելով չեն կարողանում որդեգրել դպրոց ուղարկելու, ըստ որում մեր դպրոցները քաղաքի կենտրոնում են:

N. N.

ՆԱՄԱԿ ԻՍԲԱԿԻՐԻՆ

Թիֆլիս, 2 մայիսի

Հայոց Թատրոնասէրների յանձնարարութեամբ, ուղարկելով ձեզ յօգուտ Հաւաքարի Մարիամեան օրիորդաց ուսումնարանի ամսաթղթի թատրոնում տուած ներկայացման հաշիւը, խնդրում եմ խնարհաբար տեղ տալ գրան ձեր յարգելի ընդհանուր մօտակայ համարներից մէկում: Հաշիւ. տոմսակներ և ֆիշաներ ծախվել են — 733 ռ. 65 կ., մի և նոյն թւում տոմսակների արժողութիւնից աւելի են տուել (կողմ. օթեակ 3 ռ., № 102 բաղկաթուղ—1 ռ., № 27 օթուղ—1 ռ., 50 կ.): 5 ռ. 50 կ.: Գաւառ. Պալմին վճարված է 300 ռ., պիւնսաների և դերերի արտադրելու համար 6 ռ. 80 կ., ֆիշաների տպագրութեան և կպցնելու համար 14 ռ. 85 կ., շրջերի համար 10 ռ., պիւնսիօնի համար և Տրուֆին 10 ռ., «Լնդլիանի երկիր» պիւնսայի հեղինակական վարձատրութիւն 2 ռ., կասիւր Պետրովսկուն 5 ռ., թատրոնի ծաւաններին 6 ռ.: Ընդամենը 354 ռ. 65 կ., զուտ գումար մնում է 379 ռ., որը յանձնված է ըստ պատկանելոյն Հաւաքարի Մ. Մարիամեան օրիորդաց ուսումնարանի գանձապահին:

Ն. Մերզլյանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՐ

Թիֆլիսի ուսուցիչ Թատրոնի նոր խումբը, որ կազմել է պ. Պալմ, շատ սակաւ ժողովուրդ է գրաւում իր ներկայացումների ժամանակ: Եւստի հետեւեալ օրերը պիտի տային, թատրոնի գահին՝ զրկելով միջոց դարձնելով իրեն: Ամբողջ ներկայացման ժամանակ զրկելով ոչ մի ծախսահարկի չէ լավում:

Թիֆլիսի Գումայի վերջին նիստերի խորհրդակցութեան առաւելաներ կրկին քաղաքի պլանը, ջրանցքը և սպանդանոցն էին: Մինչև այժմ ձայնաւորների միջաբանութիւնները այդ խնդիրների մասին մի որոշ հետեւանքի չեն հասնել:

Լսում ենք որ Թիֆլիսի մի քանի հայ եւ լիտաւարներ և օրիորդներ կազմել են մի թարգմանական ընկերութիւն: Նպատակը մանկական ընտիր դրքերի հայերէն լեզուով թարգմանելն է:

ԱՆԷՔՍԱՆԻՐԱՊՈԼԻՑ մեզ գրում են. «Մարտի 26-ից սկսված մինչև մայիսի մէկը այստեղ անձրեկ չէ եկել: Գիւղացիք շատ անմիտօք դրութեան մէջ են: Արտերի և դաշտերի կանաչը չէ բարձրանում: Երբ երաշտութիւնը չափազանց սաստկացաւ, բարեպաշտ այնքան սանդղապոյցիք 600 ռուբլ մատաղի փող հաւաքեցին: Մայիսի մէկին մատաղ օրհնելուց յետոյ ամենքը նրան վայելեցինք և սպասում են անձրեկի զալումն»:

Մեզ հարցրում են ԱՆԷՔՍԱՆԻՐԱՊՈԼԻՑ, որ Արդութեան օրիորդաց դպրոցի աշակերտուհիները սկսել են նուիրաւորութիւններ հաւաքել յօգուտ Արարատեան ընկերութեան: Ստորագրութիւնը շարունակվում է:

Երեւանի մեզ հարցրում են, որ ապրիլի 27-ից այստեղ անձրեկներ են գալիս:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖԻՆԱՆՍԱՆ

Ամենքը յոյս ունեն, որ պատգամաւորների ժողովի մերձակայ նստերում, ժողովը կը զբաղվի շատ նշանաւոր անտեսական հարցերով, որոնց վճիռը շատ նշանաւոր շահեր են առաջ վում: ասում են, որ այդ հարցերը նախկին նստերում պէտք է վճռվէին, ուրեմն դրանք չափազանց ուշացել են:

Պ. Յուրիէն, որ Կ. Պոլսի Ֆրանսիական դեսպան է, մայիսի 20-ին կամ 25-ին պէտք է կրկին Կ. Պոլսի վերադառնայ: Նա դուր վերադառնալուց առաջ ներկայ կը գտնվի սեւնատի նիստում: Նա մի քանի օր առաջ կը հասնի Կ. Պոլսի այն ժողովի կազմվելուց, որ պէտք է տեղի ունենայ այդ մայրաքաղաքում յունական սահմանագծի հարցին բաւականութիւն տալու: Ժողովը կը կազմվի օտար պետութիւնների դեսպաններից:

Պ. Անատոլ զը լա Ֆորթ, որ մամուլի վերաբերում է, այս օրերս մի հետաքրքիր բնութիւն ներկայացրեց ներքին գործերի միւնիստրին, որը տպված է «Journal officiel» լրագրում: այդ բնութիւնը գրված է Ֆրանսիական մամուլի ազատութեան պատմութեան մասին:

Վերջին ժամանակներս քաղաքային խորհրդարանը ուշադրութիւն դարձրեց Ֆրանսիական ուսումնարանների և կրթականների մէջ եղած յարաբերութիւնների վրա: մինչև այժմ փոքր երեխաներին կիրակի օրերով կեղեցի էին տանում: այսուհետեւ այդ բանը այլ ևս չի կրկնվի այն երեխաների հետ, որոնց ընտանիքը չեն կամենայ, որ իրանց երեխաները գնան այս կամ այն եկեղեցի: Մի քանի քահանաներ կան, որոնք մտնում են ուսումնարանների մէջ երեխանցը խոստովանեցնելու: դա հակառակ է կանոնադրութեանը. քահանաները պէտք է խոստովանեցնեն միայն եկեղեցում: Աւսումնարանները տեսուչներից և պատգամաւորութիւններից աւել ոչ ոք չը պէտք է ընդունեն: Աւսումնարան և կրթականութեան յարաբերութիւնները սաստիկ լարված են: Վերջին ժամանակներս կրթականները սկսել են սաստիկ կամայականութիւններ անել, օրինակ մի քանի միաբանութիւններ առանց թոյլաւորութեան որբանոցներ են բացել, մի քանիսը արհեստանոցներ են բացել, մի քանիսն էլ սփռվել են Ալեքսիայի մէջ և դաստիարակում են (կարծիք չը կայ, որ իրանց ոգով) արար երեխաներին: Այդ միաբանութիւնները շատ բազմաթիւ են, և նրանց անդամներ թիւը 20,000-ից էլ աւելի է:

Հանդուցեալ Վալերիի փոխարէն Կորսիկայում շուտով մի ուրիշ սենատոր կը նստեն, ասում են, որ հանդուցեալի կանդիդատը պ. Գալլինի էր, բայց բոնապարտեանները աշխատում են կոմս Բէնէդէտտիին ընտրել:

Պ. Ալբեր Գրէվի և գեներալ Սուիէ ջերմ ընդունելութիւն գտան Ալեքսիայում: Նոր նահանգապետը մի յայտարարութիւն ուղղեց տեղական ժողովրդին, որի մէջ նա գովեստներ էր անում քաղաքական վարչութեանը:

Գեներալ Գուէ այժմ Փարիզում է, և գտնվում է «Saint-Jean-de-Dien» կոչված միաբանութեան մօտ. նրա առողջութիւնը փոքր ինչ աւելի լաւ է, ուրեմն սկսել է այն լուրը, որ յայտնի էր թէ նա մեռած է:

ՎԱՆԻ ԵՒ ՇԻՏԱԿԱՅԻՑ ՄԷՁԸ ՊԱՏԱՀԱՄ ՀԱՐԱՍԱԶԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1878 օգոստոս 1—1878. դեկտեմբեր 5.

Օգոստոս 2. Շատամիսեւ թաղը բնակող Պրոքի Ջանկիր Աղայի մանչ Օսման Աղան նոյն թաղը բնակող Մ. Միսիթարի մանչ Յակոբին «դու իմ Հայս (գերիս) ես» բռնելով բռնութեամբ 1000 դուրուշ ողջ ստակ (1500 դուրուշ ընթացիկ դրամ) կը պահանջէ. երբ Յակոբը յիշեալ պահանջը վճարելու անկարող ըլլալը կը յայտնէ, Օսման նորա երկու ջորիները իւր եղբորորդի Յամուրի միջոցաւ Պոչգան խրկելով կը ծախէ, հարստահարող Յակոբը նոյն տեղու կառավարութեան բողոք քեց սակայն չը լուծելով ստիպուեցաւ ձեռնաթափ ըլլալ, յիշեալ Օսման նոյն տեղու կառավարութեան ժողովներէն միոյն անդամ է:

Օգոստոս 6. կարծկանից Բէլլու անուն գիւղը յոր 60 տունի չափ հայ բնակիչ կար Ալիանցի Բօշար Բիւրդեղէն բողոքովն կողոպտուեցաւ, թէ ուտելիք թէ հագնելիք և թէ բոլոր կահկարասիք, 1500 հատ ոչխար և 120 հատ ալ եղ և կով յափշտակուեցան նոյն գիւղի Տ. Վարդան անուն քահանան գլուխէն և նորա որդին Սարգիս թեւեւ ու ձեռաց թափէին մահաւորութեան:

Օգոստոս 10. Թիմարայ Գոմն գիւղը դաւիթի մանչ Սարգիս 50 ոչխար և 6 եղ մուկուցի Ալիուլայ ձուակօյի մարդերը յափշտակեցին, Սարգիսը Վանի կառավարութեան բողոքեց, սակայն նորա պաշտպանութիւնը չը գտնելէ ի գատ 500 դահկան կաշառք տալով հաղիւ ազատեցաւ:

Նոյն օր. Հայոց—Ձորը նոր գիւղ մի ոստիկան որ կառավարութիւնէն գիւղացուց անդորրութեան հսկելու խրկուած էր Ռէս Գրիգորի և Նազարի մանչ Յարութիւնի թեւերը կոտորեց, Ռէս Մարտիրոսի մանչ Վարդանի աչքը ճեղքեց, գիւղացուց շատերը չարաչար ծեծեց, երբ գիւղացիք Վանի կառավարութեան բողոքեցին, կառավարութիւնը բողոքողները հրամայեց բանտել. զի յանդգնած էին սուլիք ոստիկանի ձեռքէն կորզել, որով գիրքեք պիտի սպաննէր եթէ չը կորչէին: ասոր տայ գիւղացիք լքեալ փախուտաւ տվին դատէն:

Օգոստոս 17. Արտամէս գիւղը ձէպրի Գէլլու անուն թիւրք մը Ձուռօտան Աւետիսի այգիէն բոլոր նորահաս ծառերու ճիւղերը կտրելով կը տանի ձաւի ի բալի կը ձգէ, Աւետիսը երբ արած անիրաւութեան դէմ կը խօսէ, ձէպրու խնդրեց զազան մը դարձած խոշոր քար մը կտանէ, և այնչափ սաստկութեամբ Աւետիսի կողին կիջեցունէ որ նորա կողի ոտքները և արմուկն ջարդելով մահաւոր զեալին կը փռեցունէ, գիւղացիք զայով կըռնախին շալկած տուն կը փոխադրեն:

Օգոստոսի 24 Թիմարայ Կիւսնիկից ձորը Վանցի Աղկար Միրաք, դարբին Մարտիրոս և գարբին Միրիջանի որդիք կողոպտուեցան Աղջուլայ Խաթայի մարդերէն և Մարտիրոս ու Միրիջանի որդիքն ալ վիրաւորուեցան, որք քաղաքը վերադառնալով աւաղակները

Թեանց գործադրութեան արգելք եղող դրամական անձկութեան ինքիւրը լուծուած է. վերջիններ թղթաբերի երեքած լրագիրները, որք պ. թափվել քսակի փողերը կ'օգտուէր հրապարակին վրա ծափուիլը կը ծանուցանէին, և Վրաստանի նախորդ կուսակալ Վ. Գրիգոր-Պապան և Վրաստանի Սարգիս Գրիգոր-Պապան ինքիւրի ճամար կարնոյ, Տէրսիմ, Վ. անի և Վարդանի կողմէր երկուսն ընտրուելու համար, թէ մինչ ցարդ եղեալ բարեկարգութեանց գործադրութեան խոստումները միմայն խոստումներ էին ի դատ ուրիշ բան մը եղած չեն և ի զօր հաւատացնել տուին մեզ թէ այս անգամ իրօք պիտի գործադրին բարեկարգութիւն, երբ վերջին թղթաբերի լրագիրներ ծանուցին թէ Վրագիրն պիտի ստիպուի Փոքր-Վսիկոյ բարեկարգութեան մէջ պատասխանատուութիւն ձգել իւր վրայէն զի թիւրքիս տրամադիր չէ բարեկարգութեան գործադրութեան, և թէ յունի Գրիգոր-Պապան զանազան մանրամասն քննութեան պիտի ենթարկուի Վրագիրն մէջը Վրաստանի մը կողմէր կը ստիպենք մեզ հաւատալ թէ բարեկարգութեանց գործադրութեան ինքիւրը, որ բոլոր իւրօրակցան մամուլը ուղարկութիւնը գրաւած է մինչ ցարդ եղեալ միմայն մին խոստումներէն տարբեր բան մը չէ:

ԱՐՏԱԲԱՆ ԼՈՒՐԵՐ

—

«Թէհրանից «TOLUCH» լրագրին հաղորդում են, որ պարսից շահի ձանապարհորդութիւնները Նուրապուր-ի, որոնք կրկնվում են խորանային երեք տարին մի անգամ, առանց հետեւանքի չեն քննու: Նահը աշխատում է բարեկարգել Թէհրան քաղաքի դրութիւնը, փողոցները միշտ մաքրվում են և անհնարաբար: Նրանք մէջ նոր ձանապարհներ են շինվում: Նահը պատուիրել է քաղաքը մաքուր պահուիլ և արդէն դորա համար պարտատուութիւններ են տեսնում:

«ՄԵԾԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻԶԱԶԳԱՍԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Վ.ՊՈԼԻՍ, 3/15 մայիս: Ստոյկային հաստատուել: Վերադառնալ թաղութիւնը, որ ուղարկեց ուղտանին իր պատուերը, և իր սեփական եւ. ընդ որում մի նամակ, որի մէջ նա ցանկանում է պահպանել և ամրացնել նամակի ճշտ ունեցած բարեկամութիւնը:

ԲԵՐԼԻՆ, 3/15 մայիս: Հաղորդում են, որ Եւրոպայի վճռապետ միացնում է Բոսնիա և Էրցեգովինա նահանգները:

ԻՐԲԻՏ, 3 մայիս: Ներքորդ հրդեհը Իրբիումում ոչնչացրեց 44 փայտեայ սներ: Մայիսին երրորդ անգամ հրդեհ յայտնվեց, որը չնչացրեց երեք սներ:

ԲՈՒԽԱՐԱՍ, 3/15 մայիս: Բոլոր կետերի զա ժանտակտի դէմ եղած նախազգուշութիւնները փոփոխվում են. Ռուսաստանի և օրգանային մէջ յարաբերութեան ազատութիւնը վերականգնում է:

Վ.ԻԵՆԱ, 3/15 մայիս: Անդրաշի երկատես արձակուրդ է վերցնում:

ՀՈՍՏ, 3/15 մայիս: Գարիբալդու առողջութիւնը վտանգաւոր դրութեան մէջ է:

ԱՍՏՐԱԲԱՆ, 3 մայիս: Այսօր ծովի եզերին կարանտին է հիմնվել բոլոր այն նաւերը, որոնք իր զան պատեղ Պարսկաստանին նաւատարարութեան, պէտք է երեք օր կարանտինի պիտուի իրեն ներքոյ միւս: ձանապարհորդները պէտք է ենթարկվեն բժշկական հետազոտութեանը:

Ա. ՊԵՏԵՐԲՈՐԳ 4 մայիս: Մոսկովայի քաղաքային խորհրդարանը նուրիեց յօդուտ էրկուրդ քաղաքի հրդեհից վնասվածների 1,000 ռուբլ:

Ա. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 4 մայիս: Պետական բանաժողովը տոմսակր առաջին շրջանի արժէքները, երրորդ 96 ռ., երրորդ 95 ռ. 27 կ., չորրորդ 96 ռ., ներքին 5%, առաջին փոխառութեան տոմսակր արժէք 242 ռ. 50 կ., երրորդ 237 ռ. 50 կ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսակր արժէք 93 ռ. 75 կ., երրորդ 94 ռ., ոսկի 8 ռ. 58 կ.:

ՄԱՐԿԵՐ-ՀՐԱՄԱՐԱՍԿՈՂ ԳԻՐԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Типографія А. А. Михельсона